ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (*Պ-885-02.03.2021-ԱՍ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	<<ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (*Պ-885-02.03.2021-ԱՍ-011/0*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ	Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 22-րդ հոդվածի 7-րդ մասում նախագծով առաջարկվող՝ վարձու աշխատողի նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի նվազագույն շեմ սահմանելու դրույթի փոխարեն նույն հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝ 1) 6-րդ մասից հանել «մայրության» բառը և սրանով իսկ վարձու աշխատողի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մայրության նպաստի համար միջին ամսական աշխատավարձի նվազագույն շեմ (նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով) սահմանելու վերաբերյալ դրույթի գործողությունը տարածել ժամանակավոր անաշխատունակության նպաստի (հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի կամ եկամտի) վրա. 2) 10-րդ մասում «Մայրության նպաստը» բառերը փոխարինել «Նպաստը» բառով, իսկ «անցնելը» բառը՝ «անցնելու ամիսը» բառերով: Վերը նշված փոփոխությունները	Ընդունվել է	Ընդունվել է

			իրականացնելու դեպքում ժամանակավոր անաշխատունակության նպաստի դեպքում կկիրառվի օրենքի այն դրույթը, համաձայն որի, եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ վարձու աշխատողի՝ տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը պակաս է տասներկու ամսվանից, ապա վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս հաշվի կառնվի նաև հաշվարկային ժամանակահատվածում այլ գործատուի՝ մինչև տվյալ գործատուի մոտ աշխատանքի անցնելու ամիսը վճարված եկամուտը, եթե վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ այդ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ չէ:		